



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

__ հոկտեմբերի 2017 թվականի №__Ն
քաղ. Երևան

**«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ՝ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 27-րդ հոդվածի 1-ին մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից բնակիչ բաժանորդներին առաջարկվող՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության երկու և ավելի ծառայություններից կազմված փաթեթներում ներառելու համար, որպես այլընտրանքային սակագներ, սահմանել՝
 - 1) հիմնական հեռախոսագծի բաժանորդային ամսական վճարը՝ 600 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը և դրա շրջանակում յուրաքանչյուր հեռախոսագծի համար ամսական տրամադրվող անվճար ներցանցային (տեղական և միջքաղաքային) ելքային զանգերի չափաքանակը՝ 180 րոպե,
 - 2) հիմնական հեռախոսագծի բաժանորդային ամսական վճարը՝ 1100 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը և դրա շրջանակում յուրաքանչյուր հեռախոսագծի համար ամսական տրամադրվող անվճար ներցանցային (տեղական և միջքաղաքային) ելքային զանգերի չափաքանակը՝ 360 րոպե,

- 3) հիմնական հեռախոսագծի բաժանորդային ամսական վճարը՝ 1700 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը և դրա շրջանակում յուրաքանչյուր հեռախոսագծի համար ամսական տրամադրվող անվճար ներցանցային (տեղական և միջքաղաքային) ելքային զանգերի չափաքանակը՝ 800 րոպե,
- 4) հիմնական հեռախոսագծի բաժանորդային ամսական վճարը՝ 2200 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը և դրա շրջանակում յուրաքանչյուր հեռախոսագծի համար ամսական տրամադրվող անվճար ներցանցային (տեղական և միջքաղաքային) ելքային զանգերի չափաքանակը՝ 1300 րոպե:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով՝

- 1) նախատեսված փաթեթում սակագնային կարգավորման ենթակա ծառայության հետ միաժամանակ առնվազն պետք է ներառվի լայնաշերտ ինտերնետ հասանելիության կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական բջջային կապի ցանցի կամ հեռուստահեռարձակման ծառայություններ.
- 2) սահմանված վճարները և ելքային զանգերի չափաքանակները կիրառվում են միայն հանրային էլեկտրոնային հաղորդակցության երկու և ավելի ծառայություններից կազմված փաթեթներից որևէ մեկին միանալու վերաբերյալ բաժանորդի (հաճախորդի) գրավոր դիմումի հիման վրա.
- 3) չնախատեսված սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների համար կիրառվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների սահմանման մասին» №340Ն և 2007 թվականի նոյեմբերի 16-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող առանձին ծառայությունների առավելագույն սակագների սահմանման մասին» №530Ն որոշումներով սահմանված սակագները.
- 4) նշված հանրային էլեկտրոնային հաղորդակցության երկու և ավելի ծառայություններից կազմված փաթեթներում ներառված սակագնային կարգավորման չենթարկվող ծառայություններից որևէ մեկից բաժանորդի կողմից հրաժարվելու դեպքում դիմումի ներկայացման հաջորդ օրվանից հիմնական հեռախոսագծի բաժանորդային վճարի և ներառված անվճար զանգերի համար

գործում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների սահմանման մասին» №340Ն որոշմամբ «Գնային տարբերակ 1»-ի համար սահմանված հիմնական հեռախոսագծի բաժանորդային վճարը և ամսական տրամադրվող անվճար բոլորների չափաքանակը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 16-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցով «Երեքը մեկում» ծառայությունների փաթեթի շրջանակում տրամադրվող՝ սակագնային կարգավորման ենթակա ծառայության սակագինը սահմանելու մասին» №325Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
— հոկտեմբերի
2017թ.